ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի ապրիլի 18-ի, ժամը 14:00-ի նիստի
N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Ատենախոսության թեմա և գիտական ղեկավար հաստատելու և ատենախոսությունների թեմաներ վերահաստատելու մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

ԼՍԵՑԻՆ.- **Կառավարման ամբիոնի ներկայացրած Արցախի Հանրապետության «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի** հայցորդ **Շաբո Արմենի Առաքելյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Շ.Ա.Առաքելյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ վերնագրով՝ **«Ոռոգման համակարգի կառավարման ազատականացման հիմնախնդիրների լուծման ուղիները (Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության օրինակով)»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտերի տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

Շ.Ա.Առաքելյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյանին (Ը.00.02)**:

ԼՍԵՑԻՆ.- **Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի** առկա անվճար ուսուցման ասպիրանտ **Տիգրան Սամվելի Միքայելյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Տ.Ս.Միքայելյանի** թեկնածուական ատենախոսության նախկին թեման՝ «Տնտեսության միջազգային մրցունակության բարձրացման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» «Տնտեսագիտություն» բնագավառի Ը.00.06՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ (հաստատվել է գիտական խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի, ժամը 12:00-ի առցանց նիստում (արձանագրություն N 5): Գիտական ղեկավար՝ **տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գրիգոր Արշամի Նազարյան (Ը.00.06)**) ճշգրտել և վերահաստատել հետևյալ վերնագրով՝ **«Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.06՝ «Միջազգային տնտեսագիտություն»** մասնագիտությամբ:

ԼՍԵՑԻՆ.- **Մակրոէկոնոմիկայի ամբիոնի ներկայացրած Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի** ասպիրանտ **Մասիս Արտակի Զարգարյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Մ.Ա.Զարգարյանի** թեկնածուական ատենախոսության նախկին թեման՝ «Արցախի տնտեսական զարգացման

առաջնահերթությունները» «Տնտեսագիտություն» բնագավառի Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» (հաստատվել է գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 10): Գիտական ղեկավար՝ **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Ներսիկի Հախվերդյան (Ը.00.06)**) ճշգրտել և վերահաստատել հետևյալ վերնագրով՝ **«Արցախի տնտեսության ենթակառուցվածքային ապահովման առաջնահերթությունները»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. ապրիլի 18

Երևան